ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**1032.03.5 «ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

**1032.03.01.5 «ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ  ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

**ԵՐԵՎԱՆ 2020**

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**
**ՏՆՕՐԵՆ**

_____________________

«___» ___________ 201…թ.

______________________________________
Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

**1032.03.01.5 «ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 1032.03.5 «ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»**

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝** միջին մասնագիտական
**ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝** Մասնագետ՝ հրդեհային պաշտպանության
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝** միջնակարգ
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 2 տարի
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝** առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբեր | | | | | հոկտեմ | | | | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | | հունվ. | | | | փետրվ | | | | մարտ | | | | | ապրիլ | | | | մայիս | | | | հունիս | | | | | հուլիս | | | | օգոստոս | | | | II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 29.09 5.10 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.10 2.11 | 3 9 | 10 16 | 17 23 | 24 30 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 29.12 4.01 | 5 11 | 12 18 | 19 25 | 26.01 1.02 | 2 8 | 9 15 | 16 22 | 23.02 1.03 | 2 8 | 9 15 | 16 22 | 23 29 | 30.03 5.04 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.04 3.05 | 4 10 | 11 17 | 18 24 | 25 31 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | 29.06 5.07 | 6 12 | 13 19 | 20 26 | 27.07 2.08 | 3 9 | 10 16 | 17 23 | 24 31 | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավ. նախապ. | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ Ամառը | ընդամենը |
| 1 | | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | :: = | = : : | = | = | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | :: | = | = | = | = | = | = | = | = | = | 27 | 2 | 11 | | | 12 | 52 |
| 2 | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | :: = | = : : | = | = | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | :: | X | X | X | X | III | III | = | = | = | = | = | = | = | = | = | 22 | 2 | 14 | | 2 | 12 | 52 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 4 9 | 4 | 25 | | 2 | 24 | 104 |

| Նշան | Նշանակություն |
|---|---|
| (դատարկ) | Տեսական ուսուցում |
| 0 | Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ |
| ◊ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման |
| X | Նախաավարտական, արտադրական պրակտիկա |
| : : | Մոդուլների ամփոփում |
| ⮝ | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման |
| III | Ամփոփիչ պետական ատեստավո-րում |
| = | Արձակուրդ, ամանոր և սուրբ ծնունդ |

# III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 1-ին կուրս | | 2-րդ կուրս | | 3-րդ կուրս | |
| | | | | | | Այդ թվում | | | | | | | | |
| | | Քնն. | Ստու-գարք | Կուրս աշխ. | Ընդա-մենը | Տես. ուսուց. | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապ-մունք | 1-ին կիս. **14** շաբ | 2-րդ կիս. **13** շաբ. | 3-րդ կիս. **12** շաբ. | 4-րդ կիս. **10** շաբ. | 5-րդ կիս. շաբ. | 6-րդ կիս շաբ |
| **1.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 1,2տ | | 72 | 30 | 42 | | 42 | 30 | | | | |
| 2. | Տնտեսագիտության հիմունքներ | | 3տ | | 54 | 24 | 30 | | | | 54 | | | |
| 3. | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 2տ | | 54 | 26 | 28 | | | 54 | | | | |
| 4. | Իրավունքի հիմունքներ | | 1տ | | 36 | 26 | 10 | | 36 | | | | | |
| 5. | Պատմություն | | 1,2տ | | 54 | 46 | 8 | | 54 | | | | | |
| 6. | Ռուսաց լեզու | | 2տ | | 72 | 40 | 32 | | 42 | 30 | | | | |
| 7. | Օտար լեզու | | 3տ | | 72 | 40 | 32 | | | | 72 | | | |
| 8. | Ֆիզկուլտուրա | | 1-3,4տ | | 98 | 90 | 8 | | 28 | 26 | 24 | 20 | | |
| 9. | Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ | | 1տ | | 36 | 18 | 18 | | 36 | | | | | |
| 10. | Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 1տ | | 28 | 10 | 18 | | 28 | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **576** | **350** | **226** | | **266** | **140** | **150** | **20** | | |
| **2.** | **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Հաղորդակցություն | | 1տ | | 36 | 12 | 24 | | 36 | | | | | |
| 2. | Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ | | 2տ | | 36 | 12 | 24 | | | 36 | | | | |
| 3. | Համակարգչային օպերատորություն | | 1տ | | 36 | 4 | 32 | | 36 | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **108** | **28** | **80** | | **72** | **36** | | | | |
| **3.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Էլեկտրատեխնիկական հրշեջ - փրկարարական | | 1տ | | 54 | 20 | 34 | | 54 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանքներում | | | | | | | | | | | | | |
| 2. | Մասնագիտական քիմիայի հիմունքներ | | 1տ | | 54 | 24 | 30 | | 54 | | | | | |
| 3. | Արտակարգ իրավիճակների հիմունքներ | | 1տ | | 36 | 30 | 6 | | 36 | | | | | |
| 4. | Այրման և պայթյունի պրոցես | 2 | | | 72 | 36 | 36 | | | 72 | | | | |
| 5. | Ձեռներեցություն | | 4տ | | 72 | 22 | 50 | | | | | 72 | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **288** | **132** | **156** | | **144** | **72** | | **72** | | |
| **4.** | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Հրդեհաշիջման մարտավարություն | 4 | | | 90 | 32 | 58 | | | | | 90 | | |
| 2. | Հրշեջ-փրկարարական տեխնիկայի շահագործում | 3 | | | 72 | 26 | 46 | | | | 72 | | | |
| 3. | Հրդեհների կանխարգելում | | 3տ | | 90 | 40 | 50 | | | | 90 | | | |
| 4. | Հրշեջ-շարային պատրաստություն | | 2տ | | 48 | 14 | 34 | | | 48 | | | | |
| 5. | Հրշեջ-փրկարարական հերթափոխային ծառայության կազմակերպման ընդհանուր հմտություններ | | 2տ | | 36 | 16 | 20 | | | 36 | | | | |
| 6. | Կապի կազմակերպումը հրշեջ-փրկարարական աշխատանքներում | | 2տ | | 36 | 6 | 30 | | | 36 | | | | |
| 7. | Հրշեջ-փրկարարական աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում | | 3տ | | 48 | 20 | 28 | | | | 48 | | | |
| 8. | Փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների և սարքավորումների օգտագործման հմտություններ | | 2տ | | 90 | 36 | 54 | | | 90 | | | | |
| 9. | Փրկարարական պատրաստություն | | 3տ | | 72 | 30 | 42 | | | | 72 | | | |
| 10. | Հրշեջ փրկարարական աշխատանքներում առաջին օգնության ցուցաբերում | | 4տ | | 90 | 40 | 50 | | | | | 90 | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **672** | **260** | **412** | | | **210** | **282** | **180** | | |
| **5.** | **ԸՆՏՐՈՎԻ** | | 4տ | | **72** | | | | | | | **72** | | |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | | | **48** | | | | **22** | **10** | | **16** | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **1764** | | | | **504** | **468** | **432** | **360** | | |
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | **200** | | | | 50 | 50 | 50 | 50 | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | 36 | 36 | 36 | 36 | | |

| | IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | |
|---|---|---|---|
| 1. | Բարոյագիտություն | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | **V. ՊՐԱԿՏԻԿԱ** | Կիսամյակ | Շաբաթ |
| 1. | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | 1,2,3,4 | 3,8,5,5 |
| 2. | Նախաավարտական, արտադրական պրակտիկա | 4 | 4 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 25 |

**VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ**

Հունիսի 15ից - 28ը շրջանում երկու համալիր պետական քննություն ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական խմբերի մոդուլներից

| N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ<br>ԿԱԲԻՆԵՏՆԵՐ |
|---|---|
| 1. | բնօգտագործման և կենսագործունեության անվտանգության |
| 2. | քիմիայի |
| 3. | Ֆիզիկայի |
| 4. | ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների, |
| 5. | օտար լեզուների |
| 6. | համակարգչային |
| 7. | տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած բազմաֆունկցիոնալ կաբինետ |
| | **ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ** |
| 1. | փրկարարական |
| 2. | կենսաբանաքիմիական ու քաղաքացիական պաշտպանության |
| 3. | առաջին օգնության |
| 4. | հրշեջ-փրկարարական տեխնիկայի և լեռնափրկարարական գույքի |
| | **ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ** |
| 1. | փականագործական աշխատանքների |
| 2. | տեխնիկայի, սարքերի, սարքավորումների, գործիքների տեխնիկական սպասարկման և նորոգման |
| 3. | շարժական |
| | **ՎԱՐԺԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ** |
| 1. | տրանսպորտային (օդային, երկաթուղային, ավտոտրանսպորտային) վթարների դեպքում փրկարարական աշխատանքների կատարման |
| 2. | ուսումնագործնական պարապմունքների (աշտարակների վրա պարա-նային աշխատանքների կատարման, խոչընդոտների հաղթահարման, փլատակների տակ և խորշերում, ծխապատ տարածքում փրկարարական աշխատանքների կատարում, տարաբնույթ արգելքների հաղթահարում՝ ծորեր, ջրային արգելքներ) |
| 3. | փրկարար ջոկատի |

| | | |
|---|---|---|
| | 4. | հրաձգարան |
| | | **ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ** |
| | 1. | Մարզադահլիճ |
| | 2. | Մարզահրապարակ |

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:

9. ՈՒսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-Հ-5-20-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ, որից<br>տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 24 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար,<br>2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը,<br>3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը,<br>4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում,<br>5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, |

| | |
|---|---|
| | 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,<br>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,<br>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,<br>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,<br>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,<br>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,<br>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,<br>5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,<br>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,<br>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,<br>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,<br>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,<br>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,<br>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, |

| | |
|---|---|
| | կիանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կիանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում |
| **Կատարման չափանիշներ** | 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,<br>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,<br>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,<br>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,<br>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,<br>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,<br>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),<br>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն,<br>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,<br>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,<br>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,<br>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ՀՕ-5-20-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ, որից՝<br>տեսական ուսուցում՝ 4 ժամ |

| | |
|---|---|
| | գործնական աշխատանք՝ 32 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը,<br>2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր,<br>3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ,<br>4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում,<br>5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն,<br>6) աշխատի համացանցում: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը |
| **Կատարման չափանիշներ** | 1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է,<br>2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները,<br>3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից,<br>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,<br>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը,<br>6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը,<br>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,<br>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,<br>9) կատարում է փաստաթղթի տպագրում: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական |

| | |
|---|---|
| | առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր |
| **Կատարման չափանիշներ** | 1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է,<br>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,<br>3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ,<br>4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում,<br>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: |

| | |
|---|---|
| | Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պատրաստել և խմբագրել աղյուսակներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է,<br>2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ,<br>3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ,<br>4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 4** | Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,<br>2) գծագրում է կանոնավոր պատկերներ,<br>3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,<br>4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,<br>5) գծագրում է տեքստային բլոկներ,<br>6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում,<br>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,<br>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,<br>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,<br>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին |

| | |
|---|---|
| | կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:<br>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 6** | Աշխատել համացանցում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը,<br>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,<br>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,<br>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),<br>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,<br>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,<br>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, |

| | |
|---|---|
| | օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ԱԳՀ-5-20-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ, որից՝<br>տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 24 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Ուսումնառության** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ |

| | |
|---|---|
| **արդյունքները** | 1) փնտրի և գտնի աշխատանք,<br>2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ,<br>3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը,<br>4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Փնտրել և գտնել աշխատանք |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,<br>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,<br>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),<br>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,<br>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքերի, կողմերի իրավունքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր |

| | |
|---|---|
| | համապատասխանության հարցում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,<br>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,<br>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,<br>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,<br>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել |

| | |
|---|---|
| | գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,<br>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,<br>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,<br>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,<br>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: |

| | |
|---|---|
| | Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները |
| **Կատարման չափանիշներ** | 1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,<br>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,<br>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,<br>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և |

| | |
|---|---|
| | վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՆ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր էլեկտրատեխնիկայի հիմունքների վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև փրկարարական աշխատանքներում էլեկտրական սարքերի, սարքավորումների կիրառման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ, որից՝<br>տեսական ուսուցում՝ 20 ժամ<br>գործնական աշխատանք՝ 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) ներկայացնի էլեկտրական դաշտը, էլեկտրական հոսանքը և էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները,<br>2) ներկայացնի էլեկտրական հոսանքը, կատարի չափումներ չափիչ սարքերով,<br>3) ներկայացնի հաստատուն հոսանքը և դրա շղթաների սխեմաները,<br>4) ներկայացնի փոփոխական հոսանքը և դրա շղթաների սխեմաները,<br>5) կիրառի էլեկտրական սարքեր, սարքավորումներ փրկարարական աշխատանքներում: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել էլեկտրական դաշտը, էլեկտրական հոսանքը և էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում ու բացատրում էլեկտրական դաշտի նշանակությունը, էլեկտրական հոսանքի առաջացումը,<br>2) ճիշտ է ներկայացնում Օհմի օրենքը շղթայի փակ տեղամասի համար,<br>3) ճիշտ է ներկայացնում Կիրխհոֆի առաջին օրենքը,<br>4) ճիշտ է ներկայացնում Ջոուլ-Լենցի օրենքը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստային առաջադրանքի միջոցով: |

| | |
|---|---|
| | Ուսանողին կտրվեն հարցեր էլեկտրական դաշտի նշանակության, էլեկտրական հոսանքի առաջացման վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվեն թեստային առաջադրանքներ Օհմի, Կիրխհոֆի առաջին և Ջոուլ-Լենցի օրենքների վերաբերյալ:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ էլեկտրական դաշտ,<br>✓ էլեկտրական հոսանք,<br>✓ Օհմի օրենք,<br>✓ Կիրխհոֆի առաջին օրենք,<br>✓ Ջոուլ-Լենցի օրենք:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքը: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, նյութեր, մշակված թեստեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել էլեկտրական հոսանքը, կատարել չափումներ չափիչ սարքերով |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրահաղորդիչ նյութերը,<br>2) ճիշտ է բացատրում էլեկտրական հոսանքի ուժը, հզորությունը, էլեկտրաշարժիչ ուժը, էլեկտրական լարումը,<br>3) ճիշտ է ներկայացնում էլեկտրական դիմադրությունը, էլեկտրական շղթայում դրանց միացման սխեմաները և էլեկտրահաղորդականությունը,<br>4) ճիշտ է տարբերակում հոսանքի ուժի, լարման և դիմադրության չափիչ սարքերը,<br>5) ճիշտ է կատարում չափումներ հոսանքի ուժի, լարման և դիմադրության չափիչ սարքերով,<br>6) ճիշտ է ներկայացնում մագնիսական դաշտն ու դրա չափանիշները, |

| | |
|---|---|
| | 7) ճիշտ է տարբերակում և կիրառում էլեկտրական սխեմաների պայմանական նշանները,<br>8) ճիշտ է ներկայացնում օրգանիզմի վրա էլեկտրական հոսանքի վտանգավոր ազդեցությունները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր էլեկտրահաղորդիչ նյութերի, էլեկտրական դիմադրության, էլեկտրական շղթայում դրանց միացման սխեմաների և էլեկտրահաղորդականության, էլեկտրական հոսանքի վտանգավոր ազդեցությունների վերաբերյալ: Ուսանողին կհաձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն պայմանական նշանների կիրառմամբ տարբեր էլեկտրական սխեմաներ կազմելու, ինչպես նաև հոսանքի ուժի, լարման և դիմադրության չափիչ սարքերով չափումներ կատարելու կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ էլեկտրական հոսանքի ուժ,<br>✓ էլեկտրաշարժիչ ուժ,<br>✓ էլեկտրական լարում,<br>✓ հոսանքի ուժ,<br>✓ հոսանքի ուժի, լարման և դիմադրության չափիչ սարքեր,<br>✓ մագնիսական դաշտ,<br>✓ էլեկտրական սխեմաների պայմանական նշաններ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, էլեկտրական սխեմաներ, չափիչ սարքեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Ներկայացնել հաստատուն հոսանքը և դրա շղթաների սխեմաները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքը, |

| | |
|---|---|
| | 2) ճիշտ է բացատրում հաստատուն հոսանքի շղթայում դիմադրությունների հաջորդական և զուգահեռ միացումները,<br>3) ճիշտ է տարբերակում էլեկտրական կուտակիչները և մարտկոցները,<br>4) ճիշտ է կազմում հաստատուն հոսանքի շղթաների սխեմաներ: |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՊՄ-5-20-001 «Էլեկտրատեխնիկան հրշեջ-փրկարարական աշխատանքներում» և ՀՊՄ-5-20-004 «Այրման և պայթյունի պրոցես» մոդուլները: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) գնահատի օբյեկտների հակահրդեհային վիճակը,<br>2) որոշի շենք-շինությունների հրակայունության աստիճանը,<br>3) ներկայացնի շենք-շինությունների հրդեհային անվտանգության պահանջները, |

| | |
|---|---|
| | 4) իրականացնի հրդեհների հետաքննությունը,<br>5) կատարի տեղեկատվական ու վերլուծական աշխատանքներ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Գնահատել օբյեկտների հակահրդեհային վիճակը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում պետական հրդեհային հսկողության դերն ու նշանակությունը,<br>2) ճիշտ է ներկայացնում հրդեհների կանխարգելումը օբյեկտներում և բնակավայրերում,<br>3) ճիշտ է ներկայացնում շենք-շինություններին, տարածքներին և շինարարական հրապարակներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջները,<br>4) հայտնաբերում և արձանագրում է օբյեկտում առկա հակահրդեհային թերությունները,<br>5) ճիշտ է կիրառում օբյեկտների և բնակավայրերի հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված իրավական ակտերի պահանջները,<br>6) ճիշտ է կազմում օբյեկտի հակահրդեհային վիճակի վերաբերյալ գրությունները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր պետական հրդեհային հսկողության, հրդեհների կանխարգելման (օբյեկտներում և բնակավայրերում) վերաբերյալ: Գործնական առաջադրանքով կպահանջվի հայտնաբերել և արձանագրել օբյեկտում առկա հրդեհային անվտանգության թերությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ պետական հրդեհային հսկողություն,<br>✓ հրդեհների կանխարգելումը օբյեկտներում և բնակավայրերում,<br>✓ շենք-շինություններին, տարածքներին և շինարարական հրապարակներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ,<br>✓ օբյեկտում առկա հակահրդեհային թերությունների արձանագրում,<br>✓ օբյեկտների և բնակավայրերի հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված իրավական |

| | |
|---|---|
| | ակտերի պահանջներ,<br>✓ օբյեկտի հակահրդեհային վիճակի վերաբերյալ գրությունների կազմում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում տրվող հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, պաստառներ, սլայդներ, տեսաֆիլմեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում ՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Որոշել շենք-շինությունների հրակայունության աստիճանը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների հրակայունության սահմանն ու դրա հայտանիշները,<br>2) ճիշտ է ներկայացնում շենքերի կոնստրուկտիվ բնութագրերը՝ կախված հրակայունության աստիճանից,<br>3) ճիշտ է դասակարգում արտադրական և պահեստային շենքերի ու սենքերի պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորությունը,<br>4) ճիշտ է դասակարգում շինարարական նյութերի հրդեհային վտանգավորությունը,<br>5) ճիշտ է ներկայացնում ու որոշում շենքերի հրակայունության աստիճանը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողը կներկայացնի շենք-շինությունների հրակայունության աստիճանի որոշման կարգը, շինարարական կառուցատարրերի հրակայունության սահմանն ու դրա հայտանիշները: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի որոշել շենքերի ու սենքերի հրակայունության աստիճանը:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ շինարարական կառուցատարրերի հրակայունության սահմանն ու դրա հայտանիշները,<br>✓ շենքերի կոնստրուկտիվ բնութագրերը՝ կախված հրակայունության աստիճանից,<br>✓ արտադրական և պահեստային շենքերի ու սենքերի պայթյունահրդեհային և հրդեհային |

| | |
|---|---|
| | վտանգավորության դասակարգումը,<br>✓ շինարարական նյութերի հրդեհային վտանգավորության դասակարգումը,<br>✓ շենքերի հրակայունության աստիճանի որոշումը:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում տրվող հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, սլայդներ, տեսաֆիլմեր, շինարարական նորմեր և կանոններ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Ներկայացնել շենք-շինությունների հրդեհային անվտանգության պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է որոշում շենք-շինությունների ձեռքի կրակմարիչներով ապահովվածության չափանիշները,<br>2) ճիշտ է հայտնաբերում շենք-շինություններում էլեկտրասարքավորումների հրդեհային անվտանգության թերությունները,<br>3) ճիշտ է հայտնաբերում շենք-շինությունների ջեռուցման և օդափոխման համակարգերի հրդեհային անվտանգության թերությունները,<br>4) ճիշտ է հայտնաբերում շենք-շինությունների հակածխային պաշտպանության համակարգերի հրդեհային անվտանգության թերությունները,<br>5) ճիշտ է ներկայացնում շենք-շինությունների հրդեհային ջրամատակարարումը,<br>6) ճիշտ է տարբերակում և որոշում շենք-շինությունների հրդեհների ազդանշանման և մարման ինքնաշխատ համակարգերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի հայտնաբերել շենք-շինությունների ջեռուցման և օդափոխման, հակածխային պաշտպանության համակարգերի հրդեհային անվտանգության թերությունները: |

| | |
|---|---|
| | Ծրագրային մանրամասներ՝<br>✓ շենք-շինությունների ձեռքի կրակմարիչներով ապահովվածության չափանիշները,<br>✓ շենք-շինություններում էլեկտրասարքավորումների հրդեհային անվտանգության թերությունների հայտնաբերում,<br>✓ շենք-շինությունների ջեռուցման և օդափոխման համակարգերի հրդեհային անվտանգության թերությունների հայտնաբերում,<br>✓ շենք-շինությունների հակածխային պաշտպանության համակարգերի հրդեհային անվտանգության թերությունների հայտնաբերում,<br>✓ շենք-շինությունների հրդեհային ջրամատակարարում,<br>✓ շենք-շինությունների հրդեհների ազդանշանման և մարման ինքնաշխատ համակարգերի որոշում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, սլայդներ, տեսաֆիմեր, ջեռուցման և օդափոխման, ինչպես նաև հակածխային պաշտպանության համակարգերով կահավորված սենք : |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 12 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Իրականացնել հրդեհների հետաքննությունը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում փորձաքննության տեսակները,<br>2) ճիշտ է ներկայացնում հրդեհատեխնիկական փորձագետի պարտականությունները, իրավունքներն ու պատասխանատվությունը,<br>3) ճիշտ է իրականացնում հրդեհի վայրի հետազոտումը,<br>4) ճիշտ է որոշում հրդեհատեխնիկական փորձաքննության նշանակման անհրաժեշտությունը,<br>5) ճիշտ է կատարում հրդեհների հետաքննությունը,<br>6) ճիշտ է իրականացնում հրդեհների վերաբերյալ վարչական վարույթը: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր հրդեհների հետաքննության իրականացման հիմքերի, փորձաքննության տեսակների, հրդեհատեխնիկական փորձագետի պարտականությունների, իրավունքների ու պատասխանատվության վերաբերյալ: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի հետազոտել հրդեհի վայրը, իրականացնել հրդեհների վերաբերյալ վարչական վարույթ:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ հրդեհների հետաքննությունը,<br>✓ փորձաքննության տեսակները, հրդեհատեխնիկական փորձագետի պարտականությունները, իրավունքներն ու պատասխանատվությունը,<br>✓ հրդեհի վայրի հետազոտումը,<br>✓ հրդեհատեխնիկական փորձաքննության նշանակման անհրաժեշտությունը,<br>✓ հրդեհների վերաբերյալ վարչական վարույթի իրականացումը:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, սլայդներ, տեսաֆիլմեր, պայմանական հրդեհի վայր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 10 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 5** | Կատարել տեղեկատվական ու վերլուծական աշխատանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է վերլուծում օբյեկտներում և բնակավայրերում առաջացած հրդեհները,<br>2) ճիշտ է հաշվառում հրդեհները,<br>3) ճիշտ է իրականցնում հակահրդեհային քարոզչություն,<br>4) ճիշտ է հավաքագրում ու վերլուծում ստացված տեղեկությունները, |

| | |
|---|---|
| | 5) ճիշտ է կազմում հաշվետվությունները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական առաջադրանք, որի ժամանակ ուսանողը կհավաքագրի և կվերլուծի առաջադրված տեղեկությունները և կկազմի հաշվետվությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ տեղեկատվական և վերլուծական աշխատանքների կատարում,<br>✓ օբյեկտներում և բնակավայրերում առաջացած հրդեհները վերլուծում,<br>✓ հրդեհների հաշվառում, հակահրդեհային քարոզչության իրականացում,<br>✓ հաշվետվությունների կազմում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, հրդեհների հաշվառման կարգը, սլայդներ, գործնական աշխատանքների կատարման համար նախատեսված նյութեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 12 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՐՇԵՋ-ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-008 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հրշեջ-փրկարարական գույք-սարքավորումների կիրառման, ինչպես նաև հրշեջ-կիրառական մարզաձևի տիրապետման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 48 ժամ՝ որից<br>տեսական ուսուցում՝ 14 ժամ<br>գործնական աշխատանք՝ 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ |

| | |
|---|---|
| **արդյունքները** | 1) ներկայացնի հրշեջ-շարային պատրաստության առանձնահատկությունները,<br>2) կատարի հրշեջ-շարային պատրաստության վարժություններ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել հրշեջ-շարային պատրաստության առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում հրշեջ-շարային պատրաստության դերն ու նշանակությունը,<br>2) ճիշտ է կազմում հրշեջ-շարային պատրաստության պլան-կոնսպեկտները,<br>3) ճիշտ է ներկայացնում հրշեջ-շարային պատրաստության վարժություններն ըստ նորմատիվային ցուցանիշների,<br>4) ճիշտ է ներկայացնում հրշեջ-կիրառական մարզաձևը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ հրշեջ-շարային պատրաստության պլան-կոնսպեկտների կազմման, հրշեջ-կիրառական մարզաձևի ու հրշեջ-շարային պատրաստության վարժությունների նորմատիվային ցուցանիշների կատարման վերաբերյալ:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ հրշեջ-շարային պատրաստություն,<br>✓ հրշեջ-շարային պատրաստության պլան-կոնսպեկտներ,<br>✓ հրշեջ-շարային պատրաստության վարժություններն ըստ նորմատիվային ցուցանիշները,<br>✓ հրշեջ-կիրառական մարզաձև:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ, հրշեջ գույք-սարքավորումներ: |
| **Ուսուցման երաշխավորված** | տեսական ուսուցում՝ 4 ժամ |

| | |
|---|---|
| **Ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել հրշեջ-շարային պատրաստության վարժություններ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է դասավորում ու հագնում մարտական հանդերձանքը,<br>2) ճիշտ է օգտագործում մարտական հանդերձանքի մաս կազմող պիտույքները,<br>3) ճիշտ է պահպանում անհատական պաշտպանության միջոցների անվտանգ շահագործման կանոնները,<br>4) ճիշտ է իրականացնում տագնապի ժամանակ անձնակազմի հավաքն ու մեկնումը՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>5) ճիշտ է կիրառում հրշեջ փողակները, փողրակային ամրաններն ու պիտույքները՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>6) ճիշտ է տեղադրում հրշեջ ավտոմեքենան ջրաղբյուրի վրա,<br>7) ճիշտ է կիրառում հրշեջ սանդուղքները, փրկարարական պարանները՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>8) ճիշտ է իրականացնում մարտական բացազատումը՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>9) ճիշտ է կատարում հրշեջ-կիրառական մարզաձևի վարժություններն ըստ նորմատիվային ցուցանիշների՝ պահպանելով անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի ժամանակ ուսանողը կցուցադրի մարտական հանդերձանքի դասավորումն ու հագնումը, մարտական հանդերձանքի մաս կազմող պիտույքները, փրկարարական պարանների կիրառումը, մարտական բացազատումը:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ մարտական հանդերձանքի դասավորումն ու հագնումը,<br>✓ մարտական հանդերձանքի մաս կազմող պիտույքներ,<br>✓ անհատական պաշտպանության միջոցների անվտանգ շահագործում,<br>✓ տագնապի ժամանակ անձնակազմի հավաք ու մեկնում, |

| | |
|---|---|
| | ✓ հրշեջ ավտոմեքենայի տեղադրումը ջրաղբյուրի վրա,<br>✓ հրշեջ սանդուղքների, փրկարարական պարանների կիրառում,<br>✓ մարտական բացազատման իրականացում,<br>✓ հրշեջ-կիրառական մարզաձևի վարժությունների կատարումն ըստ նորմատիվների:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ, հրշեջ գույք-սարքավորումներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 26 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-009 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հերթափոխային ծառայության կազմակերպման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ՝ որից<br>տեսական ուսուցում՝ 16 ժամ<br>գործնական աշխատանք՝ 20 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) կազմակերպի շուրջօրյա հերթափոխային ծառայությունը,<br>2) կազմակերպի ու իրականացնի հրշեջ-փրկարարական ջոկատի հերթափոխի փոխարինումն ու ներքին վերակարգը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների |

| | |
|---|---|
| | բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կազմակերպել շուրջօրյա հերթափոխային ծառայություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կազմակերպում ջոկատի հերթափոխային ծառայությունը,<br>2) ճիշտ է կազմակերպում հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները,<br>3) ճիշտ է կազմակերպում հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո ավտոմեքենաների և տեխնիկայի մարտական հաշվարկի դնելը,<br>4) ճիշտ է կազմակերպում ջոկատի օրակարգով նախատեսված միջոցառումները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ջոկատի հերթափոխային ծառայության, հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո ավտոմեքենաների և տեխնիկայի մարտական հաշվարկի դրման կազմակերպումը:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ ջոկատի հերթափոխային ծառայության կազմակերպում,<br>✓ հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում,<br>✓ հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո ավտոմեքենաների և տեխնիկայի մարտական հաշվարկի դնելը,<br>✓ ջոկատի օրակարգով նախատեսված միջոցառումների կազմակերպում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 14 ժամ |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 2** | Կազմակերպել և իրականացնել հրշեջ-փրկարարական ջոկատի հերթափոխի փոխարինումն ու ներքին վերակարգը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կազմակերպում ջոկատի խմբերի հերթափոխերի, հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, տեխնիկայի, գույք-սարքավորումների, ծառայողական փաստաթղթերի, ծառայողական սենյակների ընդունում-հանձնումը,<br>2) ճիշտ է գնահատում հերթափոխը հանձնող հերթապահ խմբի հերթապահության ընթացքում կատարած աշխատանքները,<br>3) ճիշտ է իրականացնում հրշեջ-փրկարարական ջոկատի ներքին վերակարգի ծառայությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողին կհանձնարարվի իրականացնել խմբերի հերթափոխերի, հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, տեխնիկայի, գույք-սարքավորումների, ծառայողական փաստաթղթերի, ծառայողական սենյակների ընդունում-հանձնումը:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ ջոկատի խմբերի հերթափոխերի, հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, տեխնիկայի, գույք-սարքավորումների, ծառայողական փաստաթղթերի, ծառայողական սենյակների ընդունում-հանձնում,<br>✓ հերթափոխը հանձնող հերթապահ խմբի հերթապահության ընթացքում կատարած աշխատանքների գնահատում,<br>✓ հրշեջ-փրկարարական ջոկատի ներքին վերակարգի ծառայության իրականացում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն և տեխնիկա. տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված** | տեսական ուսուցում՝ 4 ժամ |

| | |
|---|---|
| **Ժամաքանակը** | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-010 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հրշեջ-փրկարարական աշխատանքներում ռադիոկապի միջոցների սպասարկման և կիրառման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ, որից<br>տեսական ուսուցում՝6 ժամ<br>գործնական աշխատանք՝30 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՊՄ-5-20-001 «էլեկտրատեխնիկան հրշեջ - փրկարարական աշխատանքներում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) սպասարկի ռադիոկապի միջոցները,<br>2) կիրառի ռադիոկապի միջոցները հրշեջ-փրկարարական աշխատանքներում: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Սպասարկել ռադիոկապի միջոցները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում հրշեջ-փրկարարական աշխատանքներում կիրառվող կապի համակարգը,<br>2) ճիշտ է տարբերակում հրշեջ-փրկարարական աշխատանքներում ռադիոկապի տեսակները,<br>3) ճիշտ է ներկայացնում հրշեջ-փրկարարական ջոկատներում կիրառվող ռադիոկայանների տեսակները,<br>4) ճիշտ է սպասարկում ռադիոկապի միջոցները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր հրշեջ-փրկարարական աշխատանքներում կիրառվող կապի համակարգի, ռադիոկապի և հրշեջ-փրկարարական ջոկատներում կիրառվող ռադիոկայանների տեսակների վերաբերյալ: Ուսանողին կհաձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն ռադիոկապի միջոցների |

| | |
|---|---|
| | սպասարկման աշխատանքների կատարման կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ կապի համակարգ,<br>✓ ռադիոկապի տեսակներ,<br>✓ ռադիոկապի միջոցներ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, սլայդներ, ուսումնական տեսանյութեր, հրշեջ-փրկարարական աշխատանքներում կիրառվող ռադիոկապի միջոցներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 14 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կիրառել ռադիոկապի միջոցները  հրշեջ-փրկարարական աշխատանքներում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կիրառում ռադիոկապի միջոցները հրշեջ-փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ,<br>2) ճիշտ է օգտվում ռադիոկապից և պահպանում կապի վարման  կանոնները,<br>3) ճիշտ է ընդունում ռադիոկապով ստացվող հաղորդումները,<br>4) ճիշտ է գրանցում և փոխանցում ռադիոկապով ստացվող հաղորդումները,<br>5) ճիշտ է հաստատում կապը հրշեջ-փրկարարական աշխատանքների ղեկավարի, կապի կենտրոնի ու ռադիոկապից օգտվելու իրավունք ունեցող ռադիոբաժանորդների հետ,<br>6) պահպանում է ռադիոկայանների շահագործման անվտանգության կանոնների պահանջները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն ռադիոկապի միջոցների կիրառման, կապի վարման  կանոնների պահպանման, ստացվող հաղորդումների ընդունման, գրանցման և |

| | |
|---|---|
| | փոխանցման կարողությունները: Ուսանողին կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ հրշեջ-փրկարարական աշխատանքների ղեկավարի, կապի կենտրոնի ու ռադիոկապից օգտվելու իրավունք ունեցող ռադիոբաժանորդների հետ կապի հաստատման վերաբերյալ:<br>Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ կապի վարման կանոններ,<br>✓ ռադիոկապի միջոցներ,<br>✓ ռադիոկապով ստացվող հաղորդումներ,<br>✓ ռադիոկայանների շահագործման անվտանգության կանոնների պահանջներ:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, սլայդներ, ուսումնական տեսանյութեր, հրշեջ-փրկարարական աշխատանքներում կիրառվող ռադիոկապի միջոցներ, մշակված իրավիճակային խաղեր: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-011 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել շնչառության համար ոչ պիտանի միջավայրում հրշեջ-փրկարարական աշխատանքների կատարման վերաբերյալ կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 48 ժամ՝ որից<br>տեսական ուսուցում ՝ 20 ժամ |

| | |
|---|---|
| | գործնական աշխատանք՝ 28 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՊՄ-5-20-002 «Մասնագիտական քիմիայի հիմունքներ» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) իրականացնի նախապատրաստական աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>2) իրականացնի աշխատանքներ շնչառության համար ոչ պիտանի միջավայրում: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ շնչառության համար ոչ պիտանի միջավայրում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում այրման արգասիքներից ու թունավոր գազերից մարդու տեսողական ու շնչառական օրգանների պաշտպանության ձևերը,<br>2) ճիշտ է ներկայացնում շնչառական ապարատների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները,<br>3) ճիշտ է իրականացնում շնչառական ապարատների մարտական ստուգումները,<br>4) ճիշտ է նախապատրաստում շնչառության համար ոչ պիտանի միջավայրում կիրառվող փրկարարական գործիքները,<br>5) ճիշտ է հաշվարկում սեղմված օդով աշխատող շնչառական ապարատների աշխատանքի ցուցանիշները,<br>6) ճիշտ է օգտագործում գազածխապաշտպան հրշեջ ավտոմեքենայի գույք -սարքավորումները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր այրման արգասիքներից ու թունավոր գազերից մարդու տեսողական ու շնչառական օրգանների պաշտպանության ձևերի, շնչառական ապարատների նշանակության, կառուցվածքի ու աշխատանքի սկզբունքների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի կատարել շնչառական ապարատների մարտական ստուգումներ, ցուցադրել և նախապատրաստել շնչառության համար ոչ պիտանի միջավայրում կիրառվող փրկարարական գործիքները: |

| | |
|---|---|
| | Ծրագրային մանրամասներ՝<br>✓ այրման արգասիքներից ու թունավոր գազերից մարդու տեսողական ու շնչառական օրգանների պաշտպանության ձևերը,<br>✓ շնչառական ապարատների նշանակություն, կառուցվածք, աշխատանքի սկզբունքները,<br>✓ շնչառական ապարատների մարտական ստուգումները, շնչառության համար ոչ պիտանի միջավայրում կիրառվող փրկարարական գործիքներ,<br>✓ սեղմված օդով աշխատող շնչառական ապարատների աշխատանքի հաշվարկային ցուցանիշներ,<br>✓ գազածխապաշտպան հրշեջ ավտոմեքենայի գույք -սարքավորումներ:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին ու ճիշտ է կատարում առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 14 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Իրականացնել աշխատանքներ շնչառության համար ոչ պիտանի միջավայրում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում շնչառության համար ոչ պիտանի միջավայրում հրշեջ-փրկարարական աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>2) ճիշտ է իրականացում հետախուզությունը շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>3) ճիշտ է տեղաշարժվում շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>4) ճիշտ է կազմակերպում աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում տարբեր ջերմաստիճանային պայմաններում,<br>5) ճիշտ է կազմակերպում գազածխապաշտպան օղակների աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>6) ճիշտ է սպասարկում շնչառական ապարատները, |

| | |
|---|---|
| | 7) ճիշտ է կազմակերպում կապը շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>8) ճիշտ է կազմակերպում մարդկանց ու նյութական արժեքների փրկումը շնչառության համար ոչ պիտանի միջավայրից,<br>9) ճիշտ է կազմակերպում անվտանգության անցագրային կետի աշխատանքները,<br>10) ճիշտ է կիրառում գազածխապաշտպան օղակի հրշեջ-փրկարարական գործիքները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: ՈՒսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի ժամանակ կստուգվեն շնչառության համար ոչ պիտանի միջավայրում հրշեջ-փրկարարական աշխատանքների, հետախուզության անցկացման, տեղաշարժման, գազածխապաշտպան օղակների աշխատանքների կազմակերպման, շնչառական ապարատների սպասարկման, կապի և անվտանգության անցագրային կետի աշխատանքների կազմակերպման, գազածխապաշտպան օղակի հրշեջ-փրկարարական գործիքների կիրառման կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ շնչառության համար ոչ պիտանի միջավայրում հրշեջ-փրկարարական աշխատանքներ,<br>✓ հետախուզությունը շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>✓ տեղաշարժը շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>✓ աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում տարբեր ջերմաստիճանային պայմաններում,<br>✓ գազածխապաշտպան օղակների աշխատանքները շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>✓ շնչառական ապարատների սպասարկումը, կապը շնչառության համար ոչ պիտանի միջավայրում,<br>✓ մարդկանց ու նյութական արժեքների փրկումը շնչառության համար ոչ պիտանի միջավայրից,<br>✓ անվտանգության անցագրային կետի աշխատանքների կազմակերպում, գազածխապաշտպան օղակի հրշեջ-փրկարարական գործիքների կիրառում:<br>Արդյունքի յուրացումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ |

| | |
|---|---|
| **ռեսուրսները** | է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեսաֆիլմեր, պաստառներ, սլայդներ, հրշեջ գույք-սարքավորումներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 14 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՔՐ ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ -5-20-012 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների և սարքավորումների կիրառման, աշխատանքների փաստացի իրավիճակներից բխող հնարավոր վտանգների և վթարների կանխման, փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման վերաբերյալ կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 90 ժամ, որից<br>տեսական ուսուցում՝ 36 ժամ<br>գործնական աշխատանք՝ 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՊՄ-5-20-001 «Էլեկտրատեխնիկան հրշեջ - փրկարարական աշխատանքներում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝<br>1) կիրառի փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցներ ու սարքավորումներ,<br>2) կանխի աշխատանքների փաստացի իրավիճակներից բխող հնարավոր վտանգներն ու վթարները՝ապահովելով անվտանգության կանոնները,<br>3) կազմակերպի և իրականացնի փրկարարական աշխատանքներ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կիրառել փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցներ ու սարքավորումներ |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է դասակարգում փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցները,<br>2) ճիշտ է ներկայացնում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող մեխանիկական գործիքների նշանակությունը, տեսակները, հնարավորությունները, կիրառման ոլորտներն ու հիմնական տեխնիկական բնութագրերը,<br>3) ճիշտ է կատարում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները մեխանիկական գործիքներով,<br>4) ճիշտ է ներկայացնում փրկարարական աշխատանքներում կիրառվող էլեկտրական գործիքների, սարքավորումների նշանակությունը, տեսակներն ու հիմնական տեխնիկական բնութագրերը,<br>5) ճիշտ է կատարում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները էլեկտրական գործիքներով ու սարքավորումներով,<br>6) ճիշտ է ներկայացնում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող ներքին այրման շարժիչով աշխատող գործիքների, սարքավորումների նշանակությունը, տեսակներն ու հիմնական տեխնիկական բնութագրերը,<br>7) ճիշտ է կատարում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները ներքին այրման շարժիչով աշխատող գործիքներով ու սարքավորումներով,<br>8) ճիշտ է ներկայացնում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող օդաճնշակային գործիքների, սարքավորումների նշանակությունը, տեսակներն ու հիմնական տեխնիկական բնութագրերը,<br>9) ճիշտ է կատարում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները օդաճնշակային գործիքներով ու սարքավորումներով,<br>10) ճիշտ է ներկայացնում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող հիդրավլիկ գործիքների, սարքավորումների նշանակությունը, տեսակներն ու հիմնական տեխնիկական բնութագրերը,<br>11) ճիշտ է կատարում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները հիդրավլիկ |

| | |
|---|---|
| | գործիքներով ու սարքավորումներով: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների դասակարգման, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող մեխանիկական գործիքների, էլեկտրական, ներքին այրման շարժիչով աշխատող, օդաճնշակային և հիդրավլիկ գործիքների, սարքավորումների նշանակության, տեսակների ու հիմնական տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների ու սարքավորումների աշխատանքային վիճակի բերման և կիրառման կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ մեխանիկական գործիքներ,<br>✓ էլեկտրական գործիքներ ու սարքավորումներ,<br>✓ ներքին այրման շարժիչով գործիքներ ու սարքավորումներ,<br>✓ օդաճնշակային գործիքներ ու սարքավորումներ,<br>✓ հիդրավլիկ գործիքներ ու սարքավորումներ:<br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, սլայդներ, ուսումնական տեսանյութեր, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող մեխանիկական գործիքներ, էլեկտրական, ներքին այրման շարժիչով աշխատող, օդաճնշակային և հիդրավլիկ գործիքներ ու սարքավորումներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 20 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կանխել աշխատանքների փաստացի իրավիճակներից բխող հնարավոր վտանգներն ու վթարները՝ |

| | |
|---|---|
| | ապահովելով անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում արտակարգ իրավիճակների վայրում աշխատանքային առանձնահատուկ պայմաններից բխող հնարավոր վտանգներն ու վթարները,<br>2) ճիշտ է ներկայացնում արտակարգ իրավիճակների վայրում փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ առաջացող հնարավոր վտանգների և վթարների կանխման անվտանգության կանոնների պահանջները,<br>3) ճիշտ է ներկայացնում և կատարում արտակարգ իրավիճակների վայրում փոքր մեխանիզացիայի միջոցներին և սարքավորումներին ներկայացվող անվտանգության պահանջները,<br>4) ճիշտ է բացատրում և կատարում փոքր մեխանիզացիայի միջոցների և սարքավորումների շահագործման անվտանգության կանոնների պահանջները,<br>5) ճիշտ է ներկայացնում և կատարում փոքր մեխանիզացիայի միջոցներով ու սարքավորումներով աշխատանքների կատարման հրդեհային անվտանգության կանոնների պահանջները,<br>6) ճիշտ է ներկայացնում և կատարում փոքր մեխանիզացիայի միջոցներով ու սարքավորումներով աշխատանքների կատարման էլեկտրաանվտանգության կանոնների պահանջները,<br>7) ճիշտ է ներկայացնում գազաֆիկացված տարածքներում փոքր մեխանիզացիայի միջոցներով ու սարքավորումներով աշխատանքների կատարման անվտանգության կանոնների պահանջները,<br>8) ճիշտ է ներկայացնում ու գնահատում անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր արտակարգ իրավիճակների վայրում աշխատանքային առանձնահատուկ պայմաններից բխող հնարավոր վտանգների ու վթարների, փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ առաջացող հնարավոր վտանգների և վթարների կանխման անվտանգության կանոնների պահանջների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի կատարել գազաֆիկացված տարածքներում փոքր մեխանիզացիայի միջոցներով ու սարքավորումներով աշխատանքներ պահպանելով |

| | |
|---|---|
| | անվտանգության կանոնների պահանջները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ առաջացող հնարավոր վտանգներ և վթարներ,<br>✓ անվտանգության կանոնների պահանջներ:<br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ, սլայդներ, ուսումնական տեսանյութեր, փոքր մեխանիզացիայի միջոցներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կազմակերպել և իրականացնել փրկարարական աշխատանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ընտրում արտակարգ իրավիճակների վայրում, ըստ առաջացած իրավիճակի, փոքր մեխանիզացիայի միջոցներն ու սարքավորումները,<br>2) ճիշտ է բաշխում արտակարգ իրավիճակների վայրում անհրաժեշտ ուժերն ու միջոցները,<br>3) ճիշտ է կազմակերպում և իրականացնում արտակարգ իրավիճակների վայրում փրկարարական աշխատանքները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի և գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին կհանձնարարվեն թեստային առաջադրանքներ արտակարգ իրավիճակների վայրում, ըստ առաջացած իրավիճակի, փոքր մեխանիզացիայի միջոցների ու սարքավորումների ճիշտ ընտրության վերաբերյալ: Ուսանողին կհաձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն պայմանական արտակարգ իրավիճակների վայրում անհրաժեշտ ուժերի ու միջոցների բաշխման և փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման կարողությունները: |

| | |
|---|---|
| | Ծրագրային մանրամասներ՝<br>✓ փրկարարական աշխատանքների կազմակերպում,<br>✓ փրկարարական աշխատանքների իրականացում:<br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, սլայդներ, ուսումնական տեսանյութեր, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում կիրառվող փոքր մեխանիզացիայի միջոցները, թեստեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՊՄ-5-20-013 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել արտակարգ իրավիճակի վայրի հետախուզության եղանակների ու ձևերի, լեռնափրկարարական ու բարձրությունների վրա իրականացվող փրկարարական, որոնողափրկարարական աշխատանքների կատարման վերաբերյալ կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ, որից<br>տեսական ուսուցում՝ 30 ժամ<br>գործնական աշխատանք՝ 42 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՊՄ-5-20-001 «Էլեկտրատեխնիկան հրշեջ-փրկարարական աշխատանքներում», ՀՊՄ-5-20-003 «Արտակարգ իրավիճակների հիմունքներ», ՀՊՄ-5-20-004 «Այրման և պայթյունի պրոցես», ՀՊՄ-5-20-010 «Կապի կազմակերպումը հրշեջ-փրկարարական աշխատանքներում», ՀՊՄ-5-20-012 «Փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների և սարքավորումների օգտագործման հմտություններ» մոդուլները: |
| **Ուսումնառության** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ |

| | |
|---|---|
| **արդյունքները** | 1) իրականացնի արտակարգ իրավիճակի վայրի հետախուզություն,<br>2) կատարի լեռնափրկարարական աշխատանքներ,<br>3) իրականացնի բարձրությունների վրա փրկարարական աշխատանքներ,<br>4) իրականացնի ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում փրկարարական աշխատանքներ, իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Իրականացնել արտակարգ իրավիճակի վայրի հետախուզություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում արտակարգ իրավիճակի վայրի հետախուզության նպատակը,<br>2) ճիշտ է ներկայացնում արտակարգ իրավիճակի վայրի հետախուզության ձևերը,<br>3) ճիշտ է կատարում արտակարգ իրավիճակի վայրի ֆիզիկական հետախուզությունը,<br>4) ճիշտ է կատարում արտակարգ իրավիճակի վայրի տեխնիկական հետախուզությունը,<br>5) ճիշտ է զեկուցում հետախուզության տվյալները և արդյունքները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր արտակարգ իրավիճակի վայրի հետախուզության նպատակի և ձևերի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն արտակարգ իրավիճակի վայրի ֆիզիկական, տեխնիկական հետախուզություն կատարելու և հետախուզության տվյալների և արդյունքների զեկուցման կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ արտակարգ իրավիճակի վայրի հետախուզություն,<br>✓ հետախուզության տվյալների և արդյունքների զեկուցում:<br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է |

| | |
|---|---|
| **ռեսուրսները** | ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, սլայդներ, տեսաֆիլմեր, ուսումնական տեսանյութեր, քարտեզներ, պլանշետ, ռադիոկապի միջոցներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 6 ժամ<br>գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել լեռնափրկարարական աշխատանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում լեռներին բնորոշ վտանգները,<br>2) ճիշտ է կիրառում լեռնափրկարարական գույք-սարքավորումները,<br>3) ճիշտ է իրականացնում լեռնափրկարարական աշխատանքները լեռնային տարբեր լանդշաֆտներում ու տարբեր եղանակային պայմաններում,<br>4) ճիշտ է տեղաշարժվում լեռնային տարբեր լանդշաֆտներով,<br>5) ճիշտ է ներկայացնում երկարատև անցումների և բարդ տեղամասերի հաղթահարման ռեժիմի պահպանումը:<br>6) ճիշտ է կատարում լեռնային տարբեր լանդշաֆտներում ու ժայռերում տուժածներին անհետաձգելի օգնության ցուցաբերումն ու տեղափոխումը,<br>7) ճիշտ է կատարում ձնահյուսերում հայտնված տուժածների որոնողափրկարարական աշխատանքները,<br>8) ճիշտ է իրակացնում որոնողափրկարարական աշխատանքներ քարանձավներում, ստորգետնյա տարածքներում,<br>9) ճիշտ է կատարում լեռնափրկարարական աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: ՈՒսանողին կտրվեն հարցեր լեռներին բնորոշ վտանգների, երկարատև անցումների և բարդ տեղամասերի հաղթահարման ռեժիմի պահպանման և լեռնափրկարարական աշխատանքների ժամանակ անվտանգության կանոնների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն լեռնափրկարարական գույք-սարքավորումների կիրառումը, լեռնային տարբեր լանդշաֆտներով տեղաշարժվելու, լեռնային տարբեր լանդշաֆտներում ու ժայռերում տուժածներին |

| | |
|---|---|
| | անհետաձգելի օգնության ցուցաբերելու և տեղափոխելու կարողությունները:<br>Ծրագրային մանրամասներ՝<br>✓ լեռներին բնորոշ վտանգներ,<br>✓ ձնահյուսեր,<br>✓ քարանձավներ,<br>✓ ստորգետնյա տարածքներ:<br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, սլայդներ, տեսաֆիլմեր, ուսումնական տեսանյութեր, լեռնափրկարարական գույք, տուժածներին անհետաձգելի օգնության ցուցաբերման ու տեղափոխման միջոցներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 10 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Իրականացնել  բարձրությունների վրա փրկարարական աշխատանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կիրառում փրկարարական պարանները, սարքերը և անվտանգության համակարգերը,<br>2) ճիշտ է կատարում փրկարարական աշխատանքները 1.3 մ մինչև 5 մ բարձրության վրա՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>3) ճիշտ է կատարում փրկարարական աշխատանքները 5մ և ավելի բարձրության վրա (վերնաշխատ պայմաններում)՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>4) ճիշտ է կիրառում  կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ, որի միջոցով կստուգվեն փրկարարական պարանների, սարքերի և անվտանգության համակարգերի, կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցների |

| | |
|---|---|
| | կիրառման, բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների անվտանգ կատարման կարողությունները: Ծրագրային մանրամասներ՝ <br>✓ բարձրությունների վրա փրկարարական աշխատանքներ, <br>✓ փրկարարական պարաններ, <br>✓ փրկարարական սարքեր և անվտանգության համակարգեր, <br>✓ փրկարարական կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցներ: <br>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, սլայդներ, տեսաֆիլմեր, ուսումնական տեսանյութեր, փրկարարական պարաններ, սարքեր և անվտանգության համակարգեր, կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցներ: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ <br>գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Իրականացնել ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում փրկարարական աշխատանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում փրկարարական աշխատանքների անցկացման հիմնական սկզբունքները, <br>2) ճիշտ է գնահատում առաջացած իրավիճակը, ապահովում աշխատանքի անվտանգ կատարման պայմանները, <br>3) ճիշտ է սահմանազատում փրկարարական աշխատանքների տարածքը, <br>4) ճիշտ է կիրառում փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցները, <br>5) ճիշտ է կատարում վթարված տրանսպորտային միջոցներից տուժածների դուրս բերումը, <br>6) ճիշտ է ներկայացնում ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ վթարափրկարարական |

| | |
|---|---|
| | աշխատանքները հրդեհի, պայթյունի, քիմիական աղտոտվածության դեպքում,<br>7) ճիշտ է ներկայացնում ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ վթարափրկարարական աշխատանքները տեղանքի և կլիմայական բարդ պայմաններում: |
